

250 զալապայ է եւ մարդաշատ եւ սըխ, որպէս
Վանատիկ եւ Ստամպօլ Ուզունն չարչուն :

ԲԱՐՔ ԵՒ ԿԵՆՅԱՂ ՖԵԼԱՀԱՅ

Եւ պիղծ Արպնին սիրտն բաց, գարշելի
դէմք, պուկտիք կախ, եւ այնպէս լիրբ եւ ա-
նամօթ են եւ անհարկիք. բնաւ ամօթ չունին
255 եւ ոչ խտրութիւն. մինն արտաքս ելնէ ջրին
վրայ, միւսն գայ ջուրն, յետ տանի գաղըն եւ
լմպէ : Նոյնպէս եւ կանայքն լիրբք եւ անա-
մօթք. ոչ ամաչեն միմիանց, այլ մերկ եւ խայ-
տառակ չըջին. նաեւ ի բաղանխն առանց
260 Փօթի մտնան, այլ բաց. տէլաքնին պառկեց-
նեն, լուսնան եւ գամօթատեղիսն արանց եւ
կանանց : Եւ զի փայտ չկայ՝ զիպալ վառեն
զքուլխանտին, որ լինի ծուխ եւ չար հոտ : Եւ
ես յիշէի զթուրքի համամնին եւ դէմիչնին եւ
265 զամենայն հուզուրնին, այլ եւ դէտէպն, զէր-
քանն եւ զամենայն պարկէշտութիւնս եւ յոգոց
հանէի. որ եւ խուղ եւ թուք առաջի մարդ-
կան ոչ արկանեն. իսկ սոքա միղեն, աղբեն
եւ այլ բազում պիղծ եւ զաղիր իրս գործեն,
270 զոր ոչ արժան համարիմ գրել եւ զունկն ձեր
յստակ պղծել. զի ամենեւին մուրտար են եւ
անմաքուր : Եւ դեռ եւս պարծին թէ մեք եմք
որդիք Մէհմէտի եւ ստոյգ Իսմայելացիք,
իսկ տաճիկն կէս ու կէս է, խորթ եւ պոռնը-
275 կորդիք, չեն նոքա Արպի նման. խօնթքարն
ալ աղախնածին է, չէ ստոյգ մուսուլման :